

կ'ըլլայ. զաւակները կը ցրուին կը կորսուին. եւ «սերունդին առատ տողանցութիւնը կը դադրի այդ օճախէն»:

*Պոտ մը ջուրը* սրտաշարժ պատմութիւնն է մամիկի մը եւ թոռնիկի մը: Ս. Սարգիսի ծումը կը պահեն անոնք. վեց օր ոչ հաց, ոչ ջուր. մամիկը իր թոռան մանկական երեւակայութիւնը կը հրահրէ Ս. Սարգիսին հրաշալի առասպելներովը. եթէ պահք չպահեն, Սուրբ Սարգիս ինչէ՛ր չընէր իրեն. բայց թոռնիկը ծարաւահիւծ կը մեռնի հինգերորդ օրուա առտուն:

*Տան սէրը* ըստ իս լաւագոյն վիպակն է Զարդարեանի: Կով Առաքելը իր տան սէրովը յափշտակուած մարդ մըն է. իր գիշեր ցորեկուան անդադրում խնամքին առարկան իր տունն է, իր միակ զբաղումն է ան. կին մը եւ մանչ զաւակ մը ունի, որոնք ընտանիքին նիւթականը կը հայթայթեն. Կով Առաքելը անոնցմով շատ քիչ կ'զբաղի. գոհ սրտով կնոջը վաստակը կ'ուտէ, բայց իր սիրական տունը մանրակրկիտ հոգածութեամբ մը կը շրջապատէ. անոր հասած փոքր վնասը կ'այլայլէ, կ'եղծանէ իր նկարագրին բովանդակ անդորր կովութիւնը. իր միակ մանչ զաւակն ալ հարազատ պատկերն է. իր աննշան արհեստին մէջ լճացած է ան. քայլ մը չի յառաջանար. հակառակ անոր, ծնողքը կ'ամուսնացնեն Մարտիրոսը, որ սակայն իր տաժանելի գործին բերմամբ կը հիւանդանայ ու կը մեռնի, մարելով ընտանիքի արեւը. հարսը կ'առնէ կը քալէ. եւ Կով Առաքել ու կինը կը մնան առանձին. տարիներ ետք կին ալ կը մեռնի. Առաքել կը մնայ միս մինակ՝ իր սիրական տանը հետ, լքուած ու աղքատ: Ժառանգորդ ազգական մը յանձն կ'առնէ ինամել Առաքելը տանը կիսուն տիրանալու պայմանով, միւս կեսն ալ եկեղեցիին տրուելու համար. եւ Կով Առաքել դուրս կը հանուի իր տունէն. ահագին վիշտ իրեն համար որ կը սպառէ, կը լմնցնէ զինքը եւ գերեզման կ'իջեցնէ:

*Շուն մըն ալ պակասը* արտասահման գրուած վիպակ մըն է. թուրք գրաքննութեան պատուհասումէն զերծ, եւ հետեւապէս ազգային խոր ցաւի մը պատկերը հայկական